



Ներքին Առաքելությունների
Ինստիտուտ | ՀԱՅԱՍՏԱՆ

Հանրային հատվածի ներքին առաքելության մարտահրավերները

Հունիս 2019



Բովանդակություն

Ամփոփագիր	3
1 Հանրային հատվածի ներքին աուդիտը	4
2 Ներքին աուդիտի չգիտակցված նպատակը	8
3 Ներքին աուդիտի կոմիտեի ձևավորումը	9
4 Կարողությունների անբավարար մակարդակը	10
Եզրակացություն	12
Օգտագործված գրականություն	13
Ներքին աուդիտորների ինստիտուտի մասին	14

Ամփոփագիր

Ներքին աուդիտը արդյունավետ կառավարման անկյունաքարերից մեկն է, որի նպատակն է բարելավել կազմակերպության արդյունավետությունը: Ներքին աուդիտն ի սկզբանե առաջացել է մասնավոր հատվածում, հատկապես լայն կիրառություն ունի ֆինանսական ոլորտում: Ավելի ուշ ներդրվել է նաև հանրային (պետական) հատվածում: Պատշաճ գործող ներքին աուդիտի համակարգը կարող է կարևոր դեր խաղալ հանրային հատվածի կառավարման արդյունավետության, ծառայությունների որակի և հաշվետվողականության բարելավման գործում:

ՀՀ հանրային հատվածում ներքին աուդիտը համընդհանուր ներդրվել է 2013 թ.-ից՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի ընդունմամբ¹: 2018թ.-ի վերջի դրությամբ հանրային հատվածում աշխատող ներքին աուդիտորների թիվը կազմել է 290 հոգի, ավելի շատ քան մասնավոր հատվածում: Նույն ժամանակաշրջանում ներքին աուդիտի կառուցվածքային միավորներ են գործել 102 պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ևս 136 գյուղական համայնքների ներքին աուդիտը պատվիրակվել է:

Թեև ամբողջ աշխարհում հանրային հատվածի ներքին աուդիտն (որտեղ որ ներդրված է) առանձնանում է իր ուրույն մարտահրավերներով, Հայաստանում դրանց ավելանում են նաև լոկալ խնդիրներ.

1. հարցերի հարցը թերևս այն է, թե ինչ է ակնկալում կառավարությունը Ներքին աուդիտից (այն չպետք է իրենից ներկայացնի պատժիչ գործիք, ինչպես տարբեր վերահսկողական ծառայություններն են),
2. մեկ այլ առանցքային խնդիր է պրոֆեսիոնալ կադրերով համայնված Ներքին աուդիտի կոմիտեների ձևավորումը, ինչը ներքին աուդիտի անկախության ապահովման կարևորագույն հիմնաքարն է,
3. հանրային հատվածի ցածր ֆինանսավորման մակարդակը և համընդհանուր ոչ մրցակցային վարձատրությունը թույլ չեն տալիս ներգրավել որակավորված կադրեր, ինչպես նաև արձագանքել նոր ռիսկերին, ինչպիսիք են SS և կիբերանվտանգության ռիսկերը:

Սույն փաստաթղթում անդրադարձ է կատարվել այս և այլ խնդիրներին, և դրանց լուծման տարբերակներ առաջարկվել՝ հիմնվելով միջազգային փորձի վրա:


¹ Օրենքի անվանումը շփոթեցնող է, քանի որ այն բացառապես վերաբերվում է հանրային հատվածի ներքին աուդիտին (ընդ որում՝ չի վերաբերվում Կենտրոնական բանկին)

1 Հանրային հատվածի ներքին աուդիտը

Ներքին աուդիտը անկախ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որի նպատակն է բարելավել կազմակերպության արդյունավետությունը: Ներքին աուդիտն ի սկզբանե առաջացել է մասնավոր հատվածում, հատկապես լայն կիրառություն ունի ֆինանսական ոլորտում: Ավելի ուշ ներդրվել է նաև հանրային (պետական) հատվածում: Պատշաճ գործող ներքին աուդիտի համակարգը կարող է կարևոր դեր խաղալ հանրային հատվածի կառավարման արդյունավետության, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի և հաշվետվողականության բարելավման գործում:

ՀՀ հանրային հատվածում ներքին աուդիտի ներդրման փորձեր արվել են դեռևս 2000-ականների սկզբին պիլոտային հիմունքներով, եթե չհաշվենք Կենտրոնական բանկը, որտեղ Ներքին աուդիտի գործառույթը ներդրվել է դեռևս 1996թ.-ին: Ներքին աուդիտի համընդհանուր ներդրումը հանրային հատվածում սկսվել է 2013թ.-ից՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի ընդունմամբ: 2018թ.-ի վերջի դրությամբ հանրային հատվածում աշխատող ներքին աուդիտորների թիվը կազմել է 290 հոգի: Համեմատության համար Հայաստանի ներքին աուդիտորների ինստիտուտի (ասոցիացիայի) անդամների թվաքանակը կազմել է 180 հոգի (ոչ բոլորն են աշխատում որպես ներքին աուդիտոր):

Գծապատկեր 1. Աշխարհում և ՀՀ-ում հանրային ու մասնավոր հատվածների ներքին աուդիտորների հարաբերակցությունները խիստ տարբեր են



Աղբյուր՝ The Global Internal Audit Common Body of Knowledge, ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2018 թ.-ի տարեկան հաշվետվություն և ՆԱԻ-Հայաստանի տվյալներ

2018թ.-ին ներքին աուդիտը գործել է թվով 56 պետական և 46 տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև 136 գյուղական համայնքներում, որտեղ ներքին աուդիտը պատվիրակվել է մասնավոր կազմակերպությունների: Սա չափազանց մեծ շրջանակ է մի ոլորտում, որտեղ ցածր են թե հասկացվածության, և թե գիտելիքի ու փորձի մակարդակը: Հարկ է նշել, որ մասնավոր հատվածում ներքին աուդիտը ներդրվել է բանկերում և ապահովագրական ընկերություններում 2005թ.-ին՝ Կենտրոնական բանկի պահանջով (այն ժամանակ 21 բանկ և 6

ապահովագրական ընկերություն), ոչ ֆինանսական հատվածում առաջամարտիկը եղել է «Արմենթել» ընկերությունը՝ հետևելով մայր ընկերության քաղաքականությանը: Համաձայն Գլոբալ ներքին աուդիտորների ինստիտուտի 2015թ.-ի CBOK² ուսումնասիրության աշխարհում միջինում 4 ներքին աուդիտորներից ընդամենը մեկն է աշխատում հանրային հատվածում, իսկ Հայաստանում հանրային հատվածի ներքին աուդիտորների թիվը կրկնակի գերազանցում է մասնավոր հատվածի թվին (**Գծապատկեր 1**): Ըստ էության Հայաստանում մասնավոր և հանրային ներքին աուդիտի գործառույթները զարգացել են միմյանցից անկախ:


Հանրային հատվածի կառույցները

Հանրային հատվածում ներքին աուդիտի ներդրման պատասխանատուն ֆինանսների նախարարությունն է որպես Կառավարության լիազոր մարմին, որն իրականացնում է միջազգային ստանդարտների և հաջողված փորձի հիման վրա ներքին աուդիտի օրենսդրության և մեթոդաբանության մշակման և ներդրման գործընթացը, ինչպես նաև ապահովում է համակարգի հաշվետվողականությունը:

Հանրային հատվածը բաղկացած է պետական կառույցներից, պետության կողմից վերահսկվող կամ ֆինանսավորվող բոլոր գործակալություններից, ձեռնարկություններից և այլ կառույցներից, որոնք սպասարկում են պետական ծրագրեր, մատակարարում են ապրանքներ, դրանք են .

- պետական կառավարման (օրինակ՝ նախարարություններ, ինքնուրույն ծառայություններ, մարզպետարաններ, և այլն) և տեղական ինքնակառավարման մարմինները (օրինակ՝ քաղաքապետարաններ),
- պետության կամ համայնքների հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ,
- հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններ:

Գծապատկեր 2. Հանրային հատվածում ներքին աուդիտը մեծամասամբ գործում է մեկ անձի ենթակայությամբ



Աղբյուրը՝ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2018 թ.-ի տարեկան հաշվետվություն և ՀՀ օրենքը ներքին աուդիտի մասին

² The Global Internal Audit Common Body of Knowledge


Ներքին աուդիտի դիրքը հանրային կառավարման մարմիններում

Ներքին աուդիտը գործում է կառույցի ղեկավարի, հանձնաժողովի կամ խորհրդի ենթակայության ներքո, որոշ բացառություններով, երբ գործում է աշխատակազմի ղեկավարի/գլխավոր քարտուղարի ենթակայությամբ: **Գծապատկեր 2**-ից երևում է, որ հանրային հատվածում ներքին աուդիտը հիմնականում գործում է մեկ անձի ենթակայությամբ՝ լինի կառույցի ղեկավար, թե աշխատակազմի ղեկավար, իսկ հանձնաժողովները և խորհուրդները թեև կոլեգիալ որոշում կայացնող մարմիններ են, միևնույնն է ղեկավարվում են կառույցի ղեկավարի կողմից: Ներքին աուդիտի դիրքը կազմակերպական կառուցվածքում և նրա հաշվետվողականությունը մեծապես ազդում են նրա անկախության և անաչառության վրա:³


Անկախության այդ բացը կոչված է լրացնել Ներքին աուդիտի կոմիտեն, որը պետք է բաղկացած լինի նվազագույնը 3 անդամից, որոնք պետք է ունենան 3 և ավելի տարվա աշխատանքային փորձ ներքին աուդիտում:⁴ Հանրային կառավարման մարմիններում, որտեղ ղեկավարին կից գործում է կոլեգիա, կոմիտեի գործառույթը կարող է անցնել կոլեգիային, այսինքն և մասնագիտական պահանջները չեն գործում, և շահերի բախումն է ակներև: Իրականում կոլեգիան, որը սովորաբար բաղկացած է կառույցի ղեկավարից և իր տեղակալներից, ոչ թե կոլեգիալ որոշում կայացնող, այլ խորհրդակցական մարմին է, և չի կարող փոխարինել խորհրդին կամ Ներքին աուդիտի կոմիտեն:

Գծապատկեր 3. Ներքին աուդիտը կորպորատիվ և հանրային կառավարման միջավայրերում տարբեր հաշվետվողականություն ունի

Կորպորատիվ կառավարման միջավայր



Հանրային կառավարման միջավայր



Աղբյուրը՝ Ներքին աուդիտի միջազգային ստանդարտներ, ՀՀ օրենքը ներքին աուդիտի մասին

³ Supplemental Guidance: Public Sector Definition, IIA-Global

⁴ Ֆինանսների նախարարի հրաման, փետրվար 23, 2012

Գծապատկեր 3-ում պատկերված է ներքին աուդիտի դիրքը կորպորատիվ կառավարման (մասնավոր) և հանրային կառավարման միջավայրերում:

Կորպորատիվ կառավարման հաջողված փորձը հուշում է, որ Ընկերության բարձրագույն կառավարման մարմինը կոլեգիալ խորհուրդն է, որն իրականացնում է գործադիր ղեկավարության գործունեության վերահսկողություն⁵, ընդ որում գործադիր տնօրենը չի կարող լինել միաժամանակ խորհրդի նախագահ (ինչը ներդրվել է ՀՀ բանկային համակարգում): Աուդիտի կոմիտեն հանդիսանում է խորհրդի մասնագիտացված ենթակոմիտեներից մեկը, որն օժանդակում է խորհրդին իրականացնել գործադիրի նկատմամբ իր վերահսկողական գործառույթը: Աուդիտի կոմիտեն հաշվետու է խորհրդին և հանդիսանում է կապող օղակ արտաքին և ներքին աուդիտի ու խորհրդի միջև: Գծապատկերից նաև երևում է, որ Ներքին աուդիտն ունի կրկնակի հաշվետվողականություն, վարչական՝ գործադիր ղեկավարությանը, և ֆունկցիոնալ՝ աուդիտի կոմիտեին: Սա շատ յուրահատուկ մոդել է, որը չենք հանդիպում այլ գործառույթների դեպքում: Ֆունկցիոնալ հաշվետվողականությունը նշանակում է ներքին աուդիտի տարեկան պլանի հաստատում և աուդիտորական հաշվետվությունների քննարկում: Այն նաև ենթադրում է ներքին աուդիտի ղեկավարի նշանակման և ներքին աուդիտի բյուջեի հաստատման որոշումների կայացում, այսինքն ներքին աուդիտի անկախության առավելագույն ապահովում:

Ֆունկցիոնալ հաշվետվողականության նպատակը ներքին աուդիտի անկախության ապահովումն է

Հանրային կառավարման միջավայրը յուրահատուկ է, այստեղ չկան վերահսկող խորհուրդներ, և կառույցի ղեկավարը կրում է որոշումների կայացման ամբողջ պատասխանատվությունը: Այս պարագայում ներքին աուդիտի գործառույթը հայտնվում է բարդ իրավիճակում, ֆունկցիոնալ հաշվետվողականության մասին խոսք չկա, լավագույն դեպքում այն կարող է ծառայել պաշտպանական երկրորդ գիծ⁶, այսինքն ռիսկերի բացահայտման օղակ՝ հաշվետու գործադիրին (օրենքներով մեզ մոտ բարձրագույն հանրային ծառայողը աշխատակազմի ղեկավարը/գլխավոր քարտուղարն է, սակայն իրականում որոշում կայացնողը կառույցի ղեկավարն է): Միջազգային փորձը հուշում է, որ այս բացը լրացնելու համար զարգացած երկրներում ստեղծում են անկախ կամ կիսանկախ ներքին աուդիտի կոմիտեներ (ի տարբերություն մասնավորի, որտեղ աուդիտի կոմիտեն համակարգում է և արտաքին և ներքին աուդիտը, հանրային հատվածում արտաքին աուդիտի համակարգում չկա, այդ պատճառով կոչվում է ներքին աուդիտի կոմիտե): Ի լրումն, ներքին աուդիտի ղեկավարի նշանակման/ազատման որոշումների կայացման մեխանիզմը ապահովում է անկախության և պաշտպանության ավելի բարձր մակարդակ:

⁵ Oversight

⁶ IIA position paper: the three lines of defense in effective risk management and control

2 Ներքին աուդիտի չգիտակցված նպատակը

Հիմնական հարցը թերևս այն է, թե ինչ է ակնկալում կառավարությունը Ներքին աուդիտից: Տեսնելով, թե ինչ կարևորություն է տրվում այսօր ներքին աուդիտին, կարելի է ասել, որ այն չի ծառայում իր նպատակին և դարձել է իր մեջ պարփակված գործունեություն:

Աուդիտ, թե՛ վերահսկողություն

Գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով՝ ներքին աուդիտի նպատակն է աջակցել կազմակերպության նպատակների իրագործմանը: Այն օգնում է կառույցին հասնել իր նպատակներին՝ համակարգված կերպով գնահատելով կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողական գործընթացները: Հարկ է նշել, որ նախկին ԽՍՀՄ երկրներում ներքին աուդիտի գործառույթը այդքան էլ համահունչ չէ ժամանակակից սկզբունքներին: ԽՍՀՄ-ում չկար ներքին աուդիտ, կային և մնացել են տեսչական/վերահսկողական կառույցներ, որոնց խնդիրը հիմնականում չարաշահումներ հայտնաբերելն է: Ներկայումս մենք ունենք Հաշվեքննիչ պալատ, Ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչություն, Պետական վերահսկողական ծառայություն, որոնց գործառույթները որոշակիորեն խաչվում են միմյանց հետ, ինչպես նաև ներքին աուդիտի հետ: Այդուհանդերձ, ներքին աուդիտն ավելի համագործակցող բնույթ պետք է ունենա, քան նշված կառույցները՝ ելնելով իր ուրույն նպատակից:

Ստանդարտներ, թե՛ կանոններ

Մեկ այլ խնդիր, որ խորհրդային ժառանգության արդյունք է, կանոնների և սկզբունքների վրա հիմնված ստանդարտների խառնաշփոթն է: Աուդիտը սկզբունքների վրա հիմնված գործառույթ է, ելնում է կազմակերպության նպատակներից, վերահսկողությունը՝ համապատասխանության գործառույթ է, փնտրում է անհամապատասխանություններ: Ունենալով միջազգային ստանդարտների հիման վրա մշակված աուդիտի օրենսդրություն, միաժամանակ ընդունվել են կառավարության որոշումներ և ֆինանսների նախարարի հրամաններ, որոնք կանոններ են սահմանում՝ ի լրումն և ի հակադրություն սկզբունքներին:

ԻՆՉ ԱՆԵԼ. Հստակեցնել նպատակը

Ամենաբարձր մակարդակով քննարկումներ կազմակերպելու միջոցով, այդ թվում՝ ներգրավելով ոլորտի փորձագետների, հստակեցնելով և տարանջատելով ներքին աուդիտի դերը այլ վերահսկողական գործառույթներից, անհրաժեշտ է ընդգծել դրա կարևորությունը կոնկրետ գործողությունների միջոցով:

Կանոնների վրա հիմնված աուդիտը պետք է վերանայել և թողնել սկզբունքները:

3 Ներքին աուդիտի կոմիտեի ձևավորումը

Ներքին աուդիտի կոմիտեի դերը առանցքային է, այն կոչված է ապահովելու Ներքին աուդիտի անկախությունը և վերահսկողությունը: Մի կողմից Ներքին աուդիտի կոմիտեի դերը խիստ թերագնահատված է, մյուս կողմից երկրում չկան համապատասխան փորձառություն ունեցող բավարար քանակով մասնագետներ:

Ներքին աուդիտի կոմիտեի դերը

Ներքին աուդիտի կոմիտեն առանցքային նշանակություն ունի ներքին աուդիտի անկախության և անաչառ հաշվետվողականության համար: Հաշվի առնելով, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մեծ մասը ղեկավարվում են միանձնյա, հանրային հատվածում այս կոմիտեի դերը չափազանց կարևոր է: Այն ըստ էության խորհրդի բացակայության պայմաններում պետք է իրականացնի խորհրդի վերահսկողական գործառույթ և Կառավարությունն այստեղ կարող է կարևոր դերակատարություն ունենալ: Այս համատեքստում կարևոր է կոմիտեի ձևավորման սկզբունքների վերանայումը՝ ապահովելու դրա անկախությունը և մասնագիտական կարողությունները⁷:

Փորձառու կադրերի պակասը

Աուդիտի կոմիտեի արդյունավետ աշխատանքի գրավականը անհրաժեշտ որակավորում և փորձառություն ունեցող անկախ անդամներ ներգրավելն է, ինչը, հաշվի առնելով երկրում այս ինստիտուտի զարգացման սաղմնային մակարդակը, լուրջ մարտահրավեր է: Միջազգային փորձը հիմնականում տատանվում է ամբողջովին անկախ կամ կիսանկախ Ներքին աուդիտի կոմիտեների միջև:

ԻՆՉ ԱՆԵԼ. Ներգրավել անկախ փորձագետներ

Կառավարությունը կարող է ձևավորել փորձագետների խումբ, որոնք կմասնակցեն մի քանի ներքին աուդիտի կոմիտեներում որպես անկախ անդամ՝ ապահովելով մասնագիտական կարծիք:

Այդ նպատակով կարելի է համագործակցել աուդիտի ոլորտի ասոցիացիաների և ընկերությունների հետ, ինչպես նաև անհատ փորձագետների հետ, ովքեր խորհրդի/աուդիտի կոմիտեի անդամի համապատասխան փորձ ունեն:

Կարևոր է ապահովել հետադարձ կապը և հաշվետվողականությունը: Տարեկան կտրվածքով պետք է հանդիպել ներքին աուդիտի կոմիտեի անդամների հետ և քննարկել առաջընթացը և խնդիրները:

⁷ Ներքին աուդիտի մասին օրենքի համաձայն ներքին աուդիտի կոմիտեն ղեկավարում է կազմակերպության ղեկավարը


4 Կարողությունների անբավարար մակարդակը

Հանրային հատվածում կառավարման անարդյունավետության խնդիրները չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չունենալ ներքին աուդիտի համակարգի ներդրման վրա: Թեև ներքին աուդիտը կոչված է նպաստելու արդյունավետության բարձրացմանը, թերի ներդրված ներքին աուդիտը չի կարող հասնել այդ նպատակին:

Վարձատրություն և որակավորված կադրեր

Վարձատրության ցածր մակարդակը հանրային հատվածում լրջորեն սահմանափակում է որակյալ կադրերի ներգրավումը, ինչի համար ներկայիս կառավարությունն այս ուղղությամբ քայլեր է ձեռնարկում: Ներքին աուդիտորների պարագայում խնդիրը բարդանում է նրանով, որ և բավարար քանակի մասնագետներ չկան, և եղածները զգալիորեն ավելի բարձր են վարձատրվում՝ համեմատած այլ մասնագիտությունների: Արդյունքում, հանրային հատվածի ներքին աուդիտում ներգրավվել են կադրեր, որոնք չունեն ներքին աուդիտի նախկին փորձ (վերահսկողական մարմինների նախկին փորձն ավելի շատ խանգարում է, քան օգնում), մեծամասամբ չեն տիրապետում անգլերեն լեզվին, որը մասնագիտության հիմնական լեզուն է՝ և մասնագիտական գրականության, և միջազգային որակավորումների (CIA, CISA, ACCA⁸) համար:

Գծապատկեր 4. Իրականացված աուդիտներում գերակշռում են գնումների աուդիտները



Աղբյուրը՝ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2018 թ.-ի տարեկան հաշվետվություն

⁸ Certified Internal Auditor, Certified Information Systems Auditor, Association of Chartered Certified Accountants

Գիտելիք և հմտություններ

Վերը նշվածից հետևում է, որ հանրային հատվածի ներքին աուդիտորները ի սկզբանե սահմանափակ հնարավորություններ ունեն ձևավորելու այնպիսի գիտելիքներ և հմտություններ, որոնք այսօր անհրաժեշտ են որակյալ ներքին աուդիտ իրականացնելու համար, ինչպես օրինակ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները⁹, COSO¹⁰-ի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման մոտեցումները, COBIT-ի տեղեկատվական ռիսկերի¹¹ և ISO27001 տեղեկատվական անվտանգության հայեցակարգերը, կիբերանվտագության ռիսկերը և այլն: Պատահական չէ, որ 2018 թ.-ին համապատասխանության, այդ թվում՝ գնումների աուդիտի հանձնառությունները կազմել են բոլոր հանձնառությունների 54%-ը¹², իսկ SS աուդիտի հանձնառություններ ընդհանրապես չեն եղել (**Գծապատկեր 4**):

ԻՆՉ ԱՆԵԼ. Սահմանել առաջնահերթություններ

Հասկանալի է, որ կառավարությունը չի կարող մասնավոր հատվածի մակարդակի վարձատրություն ապահովել, սակայն այն պետք է վերանայվի: Միաժամանակ կարելի է դիտարկել այլ խրախուսական միջոցներ, օրինակ՝ վերապատրաստումներ, առաջխաղացում, հրապարակումների և դասախոսությունների խրախուսում և այլն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համատեղ կառավարությունը կարող է ներքին աուդիտի մագիստրոսական ծրագիր ներդնել, որտեղ կարելի է պատրաստել համապատասխան կադրեր:

Կառավարությունը պետք է վերանայի «Ներքին աուդիտի մասին» օրենքի շրջանակները: Ըստ այդմ պետք է հրաժարվել չափազանց մեծ քանակի ներքին աուդիտի ստորաբաժանումներից և գյուղական համայնքներում պատվիրակած ծառայություններից (որոնք ներքին աուդիտի հետ իրականում առնչություն չունեն):

Փոխարենը պետք է ընտրել մինչև 5 առաջնահերթ պետական կառավարման մարմիններ (ցանկալի է ընդգրկել տարածքային կառավարման նախարարությունը) և, մի քանի տարի անմիջական ուշադրության կենտրոնում պահելով, զարգացնել կարողություններ, որոնք հետագայում հնարավոր կլինի տարածել այլ մարմիններում:

⁹ IFRS, IPSAS

¹⁰ Committee of Sponsoring Organizations - Internal Control Framework, Enterprise Risk Management

¹¹ Control Objectives for IT

¹² Պատճառը նաև ֆինանսների նախարարության պահանջն է գնումների պարտադիր աուդիտների վերաբերյալ, ինչը համահունչ չէ որդեգրված ռիսկերի վրա հիմնված աուդիտի սկզբունքին

Եզրակացություն

Հանրային հատվածի ներքին աուդիտը կարևոր առաքելություն ունի՝ նպաստել հանրային կազմակերպությունների կառավարման որակի բարելավմանը և համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը: Հայաստանում համակարգի ներդրման փորձն ու ստացված արդյունքները ցույց են տալիս, որ միջազգային փորձ ներդնելը մեխանիկական գործողություն չէ, չի սահմանափակվում օրենսդրության և հաստիքների ստեղծմամբ, այլ պահանջում է մտածելակերպի լուրջ փոփոխություն: Սույն փաստաթղթում ամփոփված խնդիրներն ու մարտահրավերները հնարավոր կլինի հաղթահարել, եթե կառավարությունը համակարգի զարգացումն իր ուշադրության կենտրոնում պահի, կարևորելով քայլ առ քայլ ներդրման անհրաժեշտությունը, Ներքին աուդիտի կոմիտեներում և ստորաբաժանումներում որակյալ կադրերի ներգրավումը, և համագործակցի ոլորտի ճանաչված կառույցների և մասնագետների հետ:

Օգտագործված գրականություն

1. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2010թ.-ի դեկտեմբերի 22-ին
2. ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2018թ.-ի հաշվետվություն
3. Unlocking the Power of Internal Audit in the Public Sector, By Carmen Abela, CIA, CCSA, MPA and James R. Mitchell
4. Supplemental Guidance: Public Sector Definition, IIA-Global
5. Challenges facing public sector audit committee, Institute of Directors in South Africa PSACF Secretariat
6. Global Public Sector Insight: Independent audit committees in public sector organizations, IIA-Global
7. Auditing the Public Sector, Managing Expectations, Delivering Results, The Global Internal Audit Common Body of Knowledge (CBOK), By Arthur Piper
8. IIA position paper: The three lines of defense in effective risk management and control

Ներքին աուդիտորների ինստիտուտի մասին

Ներքին աուդիտորների ինստիտուտը հիմնադրվել է 1941 թ.-ին ԱՄՆ-ում (գլխամասը՝ Ֆլորիդա) որպես միջազգային մասնագիտական ասոցիացիա, որը հանդիսանում է ներքին աուդիտի մասնագիտության ծայնը, հեղինակավոր և ճանաչված առաջնորդը և հիմնական կրթող կազմակերպությունը: Ամբողջ աշխարհում ինստիտուտի անդամների թիվը գերազանցում է 200,000-ը, իսկ որակավորված ներքին աուդիտորների (CIA) քանակը՝ 150,000-ը:

Ներքին աուդիտորների ինստիտուտ - Հայաստան

Հայաստանի ներքին աուդիտորների ինստիտուտը հիմնադրվել է 2013թ.-ին որպես հասարակական կազմակերպություն՝ ռիսկերի կառավարումն ու ներքին աուդիտը ներկայացնող անհատների կողմից՝ խթանելու և զարգացնելու ներքին աուդիտի մասնագիտությունը Հայաստանում: Հիմնադրման օրվանից ինստիտուտը հանդիսանում է Ներքին աուդիտորների գլոբալ ինստիտուտի կողմից ճանաչված գործընկերը Հայաստանում: 2015թ.-ի սեպտեմբերից ՆԱԻ-Հայաստանը հանդիսանում է նաև Ներքին աուդիտորների ինստիտուտների եվրոպական կոնֆեդերացիայի (ECIIA) թղթակից անդամ: Ավելի քան 180 մասնագետ այժմ հանդիսանում են ՆԱԻ-Հայաստանի անդամ, որոնց գերակշիռ մասն աշխատում են ֆինանսական, հեռահաղորդակցության և խորհրդատվական ոլորտներում: 2013թ.-ի կազմավորումից ի վեր ՆԱԻ-Հայաստանի անդամների ընդհանուր թիվն ավելացել է 6 անգամ:

Հայաստանի ներքին աուդիտորների ինստիտուտն այսօր հանդիսանում է երկրում ներքին աուդիտի մասնագիտությունը ներկայացնող կայացած մասնագիտական կառույց: Անդամակցությունը ստեղծում է նոր հնարավորություններ մասնագիտական զարգացման և կարգավիճակի բարձրացման համար: Ինստիտուտի անդամները կարող են օգտվել իրենց ընձեռնված մի շարք արտոնություններից, ինչպիսիք են մասնակցությունը վերապատրաստումներին, գիտաժողովներին, շարունակական մասնագիտական զարգացման հանդիպումներին, նորություններին տեղեկանալու և գրադարանից օգտվելու հնարավորությունները: Անդամներն օգտվում են նաև ՆԱԻ-Գլոբալի կողմից տրամադրվող արտոնություններից, ինչպես օրինակ՝ միջազգային որակավորման քննությունների վճարների զեղչերն են (CIA, CRMA, QIAL):

Ծանուցում

ՆԱԻ-Հայաստանը հրապարակում է այս փաստաթուղթը տեղեկատվական և կրթական նպատակների համար: Այս փաստաթուղթը նախատեսված չէ մասնավոր դեպքերին միանշանակ պատասխաններ տալու համար, այլ նախատեսված է որպես ուղեցույց: ՆԱԻ-Հայաստանը խորհուրդ է տալիս կոնկրետ խնդիրների համար միշտ դիմել անկախ փորձագետների օգնությանը: ՆԱԻ-Հայաստանը չի կրում պատասխանատվություն որևէ մեկի կողմից միմիայն սույն փաստաթղթի վրա հիմնված գործողություններ իրականացնելու համար:

Հեղինակը, նախագծի մասնակիցները, վերանայողը

Հեղինակ

Արա Չալաբյան, CIA, CRMA, FCCA, CRISC

Արա Չալաբյանը ՆԱԻ-Հայաստանի նախագահն է 2013 թ.-ից, Կենտրոնական բանկի գլխավոր աուդիտորը 2010 թ.-ից, 2017-2018 թթ. հանդիսացել է ՀՀ Ֆինանսների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներքին աուդիտի կոմիտեների անկախ անդամ: Հայաստանի ամերիկյան համալսարանում դասավանդում է ֆինանսական կառավարում և աուդիտ: Նրա «Թիմի կատարողականի բարձրացում» հոդվածը հրապարակվել է Internal Auditor պարբերականի 2018 թ.-ի ապրիլի համարում, ինչի համար արժանացել է «Outstanding Contributor 2019» մրցանակին: Ներքին աուդիտի միջազգային համաժողովներում որպես բանախոս հանդես է եկել Չեխիայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Լատվիայում, Քաթարում, ԱՄԷ-ում:

Նախագծին մասնակցել են

Կարինե Կալենյանը, CIA

Աննա Գալստյանը, MBA

Վերանայեց

Վարդան Արամյանը՝ 2017-2018թթ. ֆինանսների նախարար

Հեղինակային իրավունք

Հեղինակային իրավունքը պատկանում է ՆԱԻ-Հայաստանին: Այս փաստաթուղթը հրապարակելու համար խնդրում ենք կապ հաստատել ՆԱԻ-Հայաստանի հետ info@iia.am էլեկտրոնային հասցեով: